

մեծ եւ վճռական նշանակութիւնը խաղաղութեան ժողովին մէջ:

Ջարմանայի թուեցաւ ոչ մեզ, այլ նստել մեզ մօտեցող օտարազգիներուն, որ Պողոս Նուպար փաշայի պէս նուրբ քաղաքագիտի մը օժանդակութիւնը բարձի թողի կ'ընէ Հայկական Հանրապետութիւնն, որով Հայոց Հարցը աւելի կարեւորութիւն պիտի ստանար եւ աւելի շահաւոր լուծման մը յանգիլ: Ուստի քանի որ դեռ ժամանակ կայ, մինչեւ որ խաղաղութեան ժողովն Հայոց հարցով զբաղի, ուղղենք այն սխախտն զոր զգացինք եւ երկու հոգին, ինչպէս ասինք, մի մարմնի մէջ դնենք:

Հայրենաբաղձ վանքերնուս անձուկ սահմանէն դուրս չենք համարձակիր ուսուցիչ լինել: Այլ մեր սրտի բաղձանքն է, մեր հոգւոյ՝ ձայնն է, որ կ'ուզենք հասնի մեր սիրելի հայրենակիցներուն: Մէկ ուխտ մը ունինք տեսնալ ինչ եւ իցէ գնով եւ զոհողութեամբ Ազգայնոց երկու մեծ հատուածի իրական եւ գործնական միութիւնը «ի պատիւ զմիւ մեամբք ելանել. եւ մի՛ ումեք պարտապան գտանիցին բաց զմիմեանս սիրելոյ»:

Այրարատեան աշխարհն ի սկզբանէ եղած է Հայ ազգի ազատութեան խանձարուրքն, քաղաքական եւ կրօնական իշխանութեանց կեդրոնը, Հայ սրտի տահաւոր եւ մտքի ճրագարանն: Հինգ դարու ատրկութենէն վերջ, բաղդի բերմամբ, նոյն Այրարատեան աշխարհն՝ առաջինը կը հանդիսանայ՝ դարձեալ պարզելու ազատութեան եռագունեան դրօշն եւ Հայ ազգին ազատ եւ անկախ վարչութեան կեդրոնը դառնալու, որոյ շուրջն պէտք էր խմբուել ամբողջ Հայութիւնն իւր սիրով եւ գաղափարով: Մեր բաղձանքն էր որ Միացեալ Պատուիրակութեանց ջանքեւ

րով եւ հասարակաց համերաշխ գործակցութեամբ կազմուէր համազգական ժողովրդական ոյժ մը, օրէնսդրական մարմին մը, իշխանութիւն մը, որ երկիւղ ազդէ մերձաւոր թշնամեաց եւ պատկառանք հեռաւոր բարեկամաց: Հայ ազգը պէտք է որդեգրէ Հայկական Հանրապետութիւնը ազատ ժողովրդական եւ քրիստոնէական բարոյականի համաձայն սկզբունքներով:

Ազգային ժողովրդական կառավարութենէն դուրս մնալու են ամեն յեղափոխական կուսակցութիւն, եթէ Ջարական եւ Համիտական *թէթի* դէմ կուուելու ճրագիրներն չփոխեն կամ բարեփոխեն, յարմարցնելով ԱԶԱՏ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ կենսաքին եւ զարգացման: Ազատ Հայրենիքի որդիքը բոլոր, պիտի ունենան ազատ կամք եւ ազատ ձեռքեր. Եգիպտական խմորը ջնջելու է, աւետեաց երկիր մտնելէն առաջ:

*
*

Մինչ այս տողերը կը գրէինք հասաւ Պարիսէն Աւետաբեր լուրը թէ՛ խաղաղութեան ժողովն մտադրեր է ճանաչել Հայաստանի անկախութիւնն:

Ուրախ ենք եւ երջանիկ, որ այս պատմական ժամանակներում ապրեցանք եւ պիտի տեսնենք մեր Հայրենեաց փրկութիւնն:

Ուրախ լըր Մայր Հայաստան, որ պիտի տեսնես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունա քո: Ո՛վ Տէր, տուր որ այսուհետեւ ոչ մեր արեւը մտնայ եւ ոչ լուսինը պակսի, այլ բարեխոսութեամբ վերին քո զօրաց, միշտ անշարժ պահեալ զԱթոռ իշխանութեան վերածնեալ Հայկազնեաց:

ՄԵՐՈՒ ՇԻՐԱՅԱՑ

Պ Ի Տ Ի Ս Պ Ա Ն Ն Ե Մ

Ինձ սո՛ւր տըւէք, սուր մը պողպատ կարծրակուռ...
 Բուռն կարշնեղ զոյգ բազուկներս են պատրաստ՝
 Հոգիս յուզուած՝ ըզգացուցներս յահուր...
 Պիտի սպաննեմ... — Կիրքերս գարշ, անըզգաստ:

Հ. ԳՐԱ. Ա.